

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեդրանի

Պաշկարիոյ համար տարեկան 10ֆր
" " " 1/2 " 5 "
Արտատպանի համար " 12 "
" " " 1/2 " 6 "
Կանխիկ վճարելի

Համակ Կրամ Եռայն խրկել հետեւեալ հասցեով

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱՎՈՒՆԿ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն դրոշմիր եւ յարմար դատ-
ուաններն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին փամ մասամբ:

Շրանոցմանց տողը 20 սանթիմ.
երեքէն աւելի անգամներու համար
20 աւ 100 զեղ կը լինի:

Redaction du journal arménien
„Iravounk“
Vienne

ԹՈՒՐԲԻԱ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Սուլթան Համիտի կառավարու-
թիւնը հայկական խնդրին մէջ
անյուստի յաջողութիւններ ձեռք
ձգելէ ետքը չնորհիւ Եւրոպայի
անբարոյական և ապիկար գիւա-
նագիտութեան, պատերազմի դաշ-
տին վրայ ալ յաղթական հանգի-
սացաւ. այս կրկնակի յաջողու-
թիւններով փքացած և Եւրոպայի
ակներև ապիկարութենէն քաջա-
լիւրած թուրքիա կը տածէ այժմ
այնպիսի քաղաքական յաւակնու-
թիւններ, զորս քանի մը տարի
առաջ չէր կրնար իր մտքէն իսկ
անցնել: Անկիսի տէրութեան մը
ձեւերը կառնէ և կը փորձէ արհա-
մարհիւ Եւրոպական տէրութեանց
խորհուրդները, որոց լուծէն ազա-
տելու կը ձգտի հակառակ բազ-
մամեայ անցեալի մը առանգու-
թեանց, որոնք զինքը կենթար-
կէին Եւրոպայի բարձրագոյն հըս-
կութեան:

Սինչիւ հիմա Եւրոպա քաղա-
քական անխախտ սկզբունք մը կը
նկատէր չի՞թոյնտրիւ բնաւ որ
թուրքիայէն ինպատար քրիստոն-
եայ ազգի մը առնուած ափ մը
հոյ իսկ ու է պարագայի մէջ վե-
րագառնայ իր նախկին տիրոջ:
Թուրքը կը յաւակնի սաքի տակ
առնել երկար տարիներէ ի
վեր գործադրուած այս սկզբունքը
և վերջնապէս իւրացնել թէսալիա,
զոր իր զէնքի յաջողութիւններով
ձեռք անցուց: Թուրք թերթի-
րուն հրատարակութիւնները և
Պօլսոյ իսլամ ժողովրդեան մէջ
ցրուած յայտարարութիւններ և
թուուցիկ թերթեր, որոնք թէսա-
լիոյ կցումը կը պահանջեն օսմ.
կայսրութեան երկիրներուն հետ և
վերջապէս այն վարչական կար-
գադրութիւնները, զորս թուրք
կառավարութիւնը կընէ թէսալիոյ
մէջ տարակոյս չեն ձգեր իր գիտա-
ւորութեանց մասին: Իր զինուորա-
կան մեծ պատրաստութիւնները,
որոց վրայ տեղեկութիւն տուած
ենք միւր ներկայ թիւով, ուրիշ
նպատակ չեն կրնար ունենալ, եթէ
ոչ ապահովել իր գիտաւորութեանց

իրականացումը, պատրաստ ըլլա-
լով զէնքի զօրութեամբ մաքաւել
ու է տէրութեան մը զէնք որ ուզէ
հակառակիլ թուրքիոյ երկրակա-
լակն ծրագրին:

Եւրոպական համաձայնութիւնը,
որ հիմնուած է տէրութեանց շա-
հերուն անհամաձայնութեան վրայ,
կը ջանայ համազօր թուրքիա որ
հաճի ցունաստանի հետ հաշտուիլ
նուազ ծանր պայմաններով և թէ-
սալիան վերստին անոր թողելով:
Թէսալի չենք գիտեր թէ ինչ վի-
ճակի մէջ են այն բանակցութիւն-
ները, որոնք կը կատարուին Պօլ-
սոյ գիտաւորներուն և թէսալիոյ
բաշայի միջեւ, սակայն իրերը ի-
րենց արտաքին երեւոյթէն դա-
տելով կը ստիպուին իբր յոյժ
հաւանական ենթագործութիւն մը
ընդունել թէ թուրքիա պիտի յա-
մառի իր պահանջներուն վրայ:

Եւ կատարելապէս իրաւունք ու-
նի իր շահերուն տեսակէտով ու իր
հաշիւները շատ ճիշդ կերպով հան-
դէպ այն ծիծաղելի անճարակու-
թեան, զոր մեծ կողուող տէրութիւն-
ները վերջին տարիներ ցոյց տուին
բոլոր աշխարհի Արեւելեան խնդ-
րին մէջ:

Ամէն մարդու հետ թուրքն ալ
տեսաւ ու համադուցաւ թէ տէ-
րութիւնը զծուծ շահերու հաշիւ-
ներով միայն տագնաւած իրենց
ուղեղներովը բացարձակապէս ան-
կարող են միանալ թուրքիոյ զէնք
և անոր յարգել տալ իրենց կամքը,
մինչ միւս կողմէ, զանազան պատ-
ճառներով, կը գողան եւրոպական
պատերազմի մը վտանգէն, զոր
հետեւաբար առժամայէս հեռա-
ցընելու համար ամէն ճիշդ թա-
փելու պատրաստ են: Ասոր իբր
անխուսափելի հետեւեալ Եւրոպա
ստիպուած է թուրքին խնայել,
անոր ոճիրներուն աչք գցել, ի
հարկին մինչեւ իսկ չորիլ զինք:

Թուրքիա այնքան ապուշ է որ
չուզէ օգտուիլ Եւրոպայի քաղա-
քական այս ողորմելի կացութե-
նէն, որ բաց ասպարէզ կը թողու
անոր հակաքրիստոնէական ձգ-
տումներուն իրականացման: Իս-
լամութիւնը, որ Սուլթան Հա-
միտի օրով անսովոր ոգեւորութիւն

մը ստացաւ, իր գլուխը վեր կը
բարձրացնէ և կը խոստանայ նիւ-
թապէս ու բարոյապէս հզօր զօ-
րավիգ մը ըլլալ իր խալիֆային:
Կարելի է վերջինին համար ա-
ւելի պատահ և աւելի նպատաւոր
ժամանակ մը երեւակայիլ Գրիս-
տոնէութեան զէնք մաքաւելով նո-
րանոր իրաւունքներ և իրաւասու-
թիւններ ձեռք բերելու անոր հան-
դէպ:

Չկարծենք որ իրերու այս վի-
ճակին մէջ թուրքիա մտադիր է
բաւականանալ թէսալիան առնե-
լով և ջնջելով այն առանձնաշնոր-
հումները զոր յոյն հպատակ՝ երբ
երկրին մէջ կը վայելեն դաշնա-
դրութեանց զօրութեամբ: Նա
պարզապէս մէկ կողմ պիտի նետէ
նաեւ բարենորոգումներու խնդիրը,
զոր երկրին քրիստոնեաներուն
համար միայն նպատաւոր կը
նկատէ: Յետոյ քայլ առ քայլ ա-
ւելի պիտի յառաջանայ իր յաւակ-
նութեանց մէջ նոյն իսկ մեծ տէ-
րութեանց հանդէպ, քանի որ զա-
նոնք անզօրութեան դատապար-
տուած տեսնէ իրենց շահերուն հա-
կառակութեան պատճառով:

Օր մը այսինչ տէրութեան պա-
հանջումներուն գիմադրելով և ու-
րիշ տէրութեան մը քծնելով, այ-
սօր Ռուսիոյ յարած, վաղը Գեր-
մանիոյ փաթթուած ձեւանալով՝
Դուռը նոր անուշ պիտի մատա-
կարարէ այն անհամաձայնութեան
և կասկածներուն, որոնք կան ար-
դէն տէրութեանց միջեւ՝ այս-
պէս աւելի զերարացնելու համար իր
նպատակներուն գործադրութիւնը:

Եւրոպացիներուն խաղաղած կա-
տակիրութեան բնական հետե-
ւանքն է այս. իրենց ձեռքով
անուցին այս կնճառ փորձանքը,
որ շատ չանցնիր պիտի ստիպէ
զիրենք վերջապէս Արեւելեան խն-
դիրը լուծելու կամ համաձայնու-
թեամբ, կամ ընդհանուր պատե-
րազմով մը որ ոչ միայն թուրքին
այլ իրենց գործած աններելի յան-
ցանքներու արդար պատիժը և
միանգամայն վերաւորեալ հայու-
թեան համար գոհացում մը պիտի
ըլլայ:

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Վերջիւս մեր մէջ երեւան եկած
է նորասէրներու դատակարգ մը
որոնց թիւը սակայն բարեբախտա-
բար շատ ցանցաւ է:

Այս պարոնները բոլորովին անձ-
նատուր իրենց կարգացածներուն
կամ լսածներուն և նոյն իսկ վըս-
տահելով իրենց անձնական ըմ-
բռնումներուն, այնքան յափշտա-
կուած են, որ ինքզինքնին ճշ-
մարիտ Եւրոպացի կարծելով, նո-
րութիւններու հաճոյքը ներելի կը
սեպեն իրենց: Կը մոռնան թէ
մեր ազգը բոլորովին տարբեր
պայմաններու տակ կապրի, թէ՛
տարբեր ցաւեր ունի և տարբեր
պայմաններ կակընկալէ. և այս
մոռացման հետեւանքովն է որ
շատ քիչեր ահա՛ն կը կախեն այս
ինքնակոչ բարենորոգիչներուն:

Ժողովուրդը միշտ աւելի լուրջ,
աւելի ծանրախոհ, գիտէ թէ այդ
նորութեանց պատշաճ ընդունե-
լութիւնը ո՞րն է. և կը մնայ ա-
պառաժի պէս անխախտ՝ սիրով
և գոյովով պլլուած իր աւանդու-
թիւններուն:

Աւանդամու է. սակայն գիտ-
նալով թէ աւանդամուրութիւնը մե-
ղի պէս ժողովրդի մը համար ինչ
թանկագին է և թէ՛ եթէ ուրիշ
ազգիքու համար պարզապէս գո-
րովոյ ցոյց մըն է անցեալին, ի-
րեն համար ոչ յետագիւմութիւն է
և ոչ կոյր պահանջողականութիւն,
այլ հրամայական պարտք մը, ա-
ռաքնութիւն:

Չունենալով բնականորեն որոշ
և ամփոփ վայր մը, տիեզերքի
բոլոր կէտերուն վրայ սփռուած,
շատ տեղեր իր մայրենի լեզուն
անգամ կորուսած, միշտ ենթա-
թակայ կամ մահմտական դա-
հիճներու կայինին և կամ քրիս-
տոնեայ որսորդին ցանցերուն,
հայուն ինչ միջոց կը մնար պահ-
պանելու իր ազգային ինքնու-
թիւնը և ապրեցնելու զայն մինչև
Մայր – Հայրենիաց փրկութեան
թուականը, եթէ ոչ իր եկեղեցին,
իր ազգային եկեղեցին, որ քրիս-
տոնեայ աշխարհի մէջ, բազմու-

Թեան մէջ տեղ չէ կորսուած, ուստի ներառելով իր որոշ տեղը, չնայելով իր սեփական օրէնքներուն և աւանդութեանց:

Ասոնք այն բարոյական կոպերն են որոնք մէյ մէկ երակի պէս կերկարին եկեղեցւոյ սրտէն և իր իր շուրջը կը յօգեն իր բոլոր զաւակները, ուր որ ալ ըլլան աւանդ:

Եկեղեցւոյ հարազատ զաւակ մը կը զգուշանայ այդ երակներէն աւանդները անհատաբար իսկ խղիւղէ, խորհելով որ ատկէջ գործարարներն այնպիսի անկարգութիւններ կը բնական ծագիլ, որոնցմէ գուցէ ամբողջ մարմինը վտանգուի:

Ուրիշ խօսքերով:

Մենք եկեղեցական օրէնքներ ունինք որոնցմէ մէկ քանին, աւանդականները, թերութիւններէ զերծ չեն կըսուի: Նպատակս չէ զանոնք վերլուծել, հաստատել ջանալու համար անոնց տրամաբանական կամ անհեթեթ ընտելութիւնը: Թերեւս ուրիշ ոտեն վերադառնալով այդ խնդրոյ և մասնաւոր այն կէտերուն որ կը վերաբերին եկեղեցականաց ամուսնութեան:

Առայժմ սա հարցին վրայ պէտք է լուսաբանուիլ թէ՛ ընդունելով հանգերձ օրէնքներուն անբաւականութիւնը, մենք հասցնենք իրաւունք ունինք անհատաբար այդ թերութիւններուն մէկին ծանրութիւնը զգալուս պէս մեր անձին վրայ, ըմբոստանալ անոնց դէմ, մեր հասկացած կերպով բարեփոխելու և ծափահարելու զանոնք որ այսպիսի վարմունք մը կ'ունենան:

Եթէ այս տեսակ բան մը կայ, այլ եւս խօսք չի մնար:

Բայց ես կը կարծեմ թէ օրէնք մը որչափ ատեն որ օրէնք մնայ, նուիրական է. կոյր հնազանդութիւն կը պահանջէ ան. և ամեն ոք կը խնայարձի առջին, երբ նոյն իսկ ծանր զոհողութեան մը հարկը հրաւիրէ ետեւէն:

Օրէնքի դէմ գործողը եկեղեցւոյ սրտին կը զարնէ և նոյն հաւաքածով կը վերադառնէ բոլոր այն անդամները զորս իր հովանիին տակ կը պատասխարէ:

Ոճրագործ մըն է պարզապէս:

Օրինադրանքները, ուրիշ տեղեր, ծանր պատիժներու կենթարկուին, բայց մենք որ ոչ բանաւ ունինք, ոչ շղթայ, մեր արհամարհանքով միայն կրնանք պատժել զանոնք. սակայն այդ ալ շատ կիրեւայ. օրինակի համար, Պ. Ե. կը պահանջէ որ իր տէրտէրին վրայ ըզմայլինք և մեծարկնք զինք իբր օրինակելի անձնաւորութիւն. չուզելու ընդհանրել թէ իր պաշտպանեալը գուշակելով որ հարկաւ թաքուն մեքենայութիւնները շուտ մը կընային զինքը խայտառակել, երկու չարեաց փորձադոյնը ընտրած է իր ընթացքին ամբողջ պատասխանատուութիւնը ծանրաբեւ-

նելով եկեղեցւոյ վրայ: Ասիկայ գիտնադիտական փոքրիկ գործածութիւն մըն է, արդարեւ շատ վարպետագիր, սակայն հրապարակագիր մը մտքեղծութեամբ անհատական:

Ինչ կընեն քաղաքական իշխանութիւն վայելող ազգերը թերի օրէնքի մը առջեւ. իսկոյն ձեռնահաս ժողովներու կը ներկայացնեն զանոնք, յարգելով սակայն միւլ չեւ սեփական քարեկալման օրը:

Իսկ մենք, առանց բարեփոխելի օրէնքները մեր ձեռնհասելու, քննութեանը յանձնելու, առանց սպասելու անոնց լուծմանը, գաղաւոր օրէնք մը ոտնակոխ ընող օրինազանց, ուխտագրութ մը պարկեշտ և շրջահայեաց կը հրաշակենք:

Ահա հոգ է ահռելի սխալը:

Եթէ մինչեւ ցարգ մեր հոգեւոր պետերը շատ քիչ փոյլ ըլլած են չեղումներ ընելու նախ կին օրէնդրութեան դաշտին մէջ, անշուշտ մտածած են թէ գուցէ ինքիւ չեղում մը զօրաւոր նախ ընթացքներու տեղի տալով, քայլաւորներ առաջ բերէին և ազգը մասնէին այնպիսի բարոյական անիշխանութեան մը որուն ոչ մէկ հայրապետ, ոչ մէկ Սինդ Կաթողիկոսականութեան ըլլալ չէ՛ համարձակած:

Ազգային արդի կացութեան մէջ մանաւանդ, հայուն պարտքը կը հրամայէ իրեն ամեն ատենէ աւելի ըլլալ աւանդամուլ և օրինակ պահ: Սինդ հայ, մանաւանդ ան որ հանրային կեանքի մէջ կապրի, պատրաստ պէտք է կենայ իր տեղը, պատենչին վրայ, խաչով, զրչով, զէնքով փութացնելու ազգին փրկութեան սուրբ գաղտը:

Եւ երբ փրկութեան ժամը հնչէ, երբ տիեզերքի ամեն անկիւններէն երթանք համախմբել մեր պապերուն երկրին մէջ, երբ, կըսեմ, եկեղեցական օրէնքներէ տարբեր օրէնքներ մեր գոյութիւնը երաշխաւորեն, այն ատեն ամեն վտանգ անցած կըլլայ. և ամեն անոնք որոնք բարենորոգիչ խմորը կը զգան ներսիքինին, ազատ կըլլան իրենց ուղած ձեռովը բոքրականք ընել, ինչպէս տեղի կ'ունենայ իշխանութիւն ունեցող ամեն երկրի մէջ:

Գաւառ-Արշալիր

ԹՈՒՐԲԻՈՅ ՍՊԱՌԱՋԻՆՈՒՄԸ

Թուրքիա զինուորական ահեղ պատրաստութեամբ զրաւած է:

Եւրոպական մամուլը օրը օրին կ'աւետէ թուրք մեռեալ կայսրութեան այս անակնկալ փորձերը՝ կենդանութիւն և զօրութիւն ցոյց տալու համար: Եւ իրօք զարմանալի է թէ ինչպէս թուրք կառավարութիւնը, որուն կրթական վի-

ճակին վրայ աշխարհք արտադրողներ կը կարգար և ահագին երկեղներ կը յայտնուէին ի մասին այն անգարմանելի տկարութեան զոր անիկա ցոյց պիտի տար պատերազմ մը ծագելու պարագային մէջ, հիմա կարծես մագական գաւազանի հարուածով մը, կամ, Պոմպէոսի նման սուք գետին զարնելուն պէս անթիւ լէգէոններ դուրս կը ժայթքեցնէ:

Իրօք, ոչ ոք կրնար միտքէն անցունել թուրքին այս հզօր յառնումը, որ լուրջ և պատճառաւոր ետ վախեր կը ներշնչէ եւրոպական մամուլին:

Չորին կառավարութիւնը մոտահոգութիւն կը զգայ թուրքիոյ ահաւոր սպառնալիքութիւններէն, մանաւանդ որ հիմակ ակնհայտ է թէ լուրջ այս մարտագու պատրաստութիւնները ազգային Գերմանիոյ կողմէ քաջաբեւութեամբ են:

Պիլմարք իշխանին բերան՝ Համպուրիէր Նախարարներն արդի հաւանական վրայ նախկին նախարարապետին սպառնալիքութիւնները կը պարզէ, որոնք բնաւ ապահովիչ չեն:

Շատ կարեւոր է բազմաթիւ արդի քաղաքական վիճակը 1877ի վիճակին հետ, վասն զի անիկա կարգաւորանքն սա երկեղը թէ պաշտանեան ժողովուրդներու կողմէ թուրքիոյ դէմ յարձակում մը առաջ չբերէ ընդհանուր պատերազմ մը, եթէ եւրոպական գիտնադիտութիւնը ցոյց չտայ իմաստութիւն մը որուն ոչ մէկ հետք տեսնուեցաւ ցարգ:

«Ինչպէս 1877ին թուրքիա չընկերեցաւ պատերազմի առջեւէն, իր գործերուն մէջ Ռուսիոյ անհանգուրժելի միջամտութիւնէն ընդմիջտ աղատուելու յոյսով, այն պէս ալ այսօր, գաղտնի իր ահեղ պատրաստութիւններէն, ամենածանր դէպքերու համար կը թուի պատրաստուիլ: Անշուշտ անիկա կը հաշուէ թէ հաւանականութիւնները երբէք լուսադոյն եղած չեն իրեն համար՝ ի մասին իր բանակին, իր զօրավարներուն քաջութեանը, իր պատերազմիկ յատկութիւններուն, իր զինուորացիութիւն, և կրնայ միեւնոյն բանը ըսուիլ իր բարոյական կորովին, եւրոպիոյ քաղաքական կացութեան և իսլամական աշխարհի հոգեկան վիճակի մասին»:

Նոյն թերթը կը յարէ. «Պատերազմի սկիզբէն, թուրքիա անշուշտ իր պատրաստութիւններն ըրաւ սա նախատեսութեամբ թէ ընդգէմ Յունաստանի իր յաղթութեանց պառլը պիտի ստիպուէր պաշտպանել տէրութիւններու միջամտութեան դէմ: Հիմայ Եւրոպիոյ մէջ 480,000, ֆորը-Ասիոյ և Սուրիոյ մէջ 350,000 պատրաստ զինուոր ունի: Ասկից զատ, իբրեւ նախազգուշութիւն, ահագին գումարներ ունի տրամադրելի ուրիշ իսլամական աշխարհի կամա-

ւոր նուէրներէն միայն կրնան գոյաւնալ:

Ալ անցաւ գնաց այն ժամանակն ուր Եւրոպա իր ազգեցութիւնը ի գործ կը դնէր թուրքիոյ վրայ»:

Կ. Պոլսէն կը գրեն Սրաւոսթաթի. «Թուրքիա անդուլ կը շարունակէ նոր զօրք զրկել թեաւալիա և Սահեղեմի: Միանգամայն բնաւ դիտում չի ցուցնել տեղի տալու քաղաքականութեանը, յունական հաղթ պարպելու խնդրի մասին: Բարբոսի հաւանական է թէ տէրութիւնները, նոյնիսկ եթէ Գրանառաջարկելի պայմաններու մասին համաձայնին, պիտի տեսնեն որ Սուլթանին զանոնք ընդունել տալը հիմնովին տարբեր բան մըն է»:

Լա Բարբի Պոլսէն կը ստանայ հետեւեալ մանրամասնութիւնները:

«Թուրքիա կը շարունակէ իր գործահանութիւնը. զինուորագործի կրնքումէն ի վեր ուրիշ քառասունը չորս վաշտեր զրկուեցան Անատոլիան եւրոպական թուրքիա, և զետեղուեցան Ռոտտսթոքէն Սէլաուիկ: Ասկից զատ 4րդ զօրաբա, նախ յոր մուսթաֆա զիններն ուրէտիքները զօրջի տակ կոչուեցան, մեծ փութով կը մարզուին և մաւղերեան հրացանի գործածութիւնը կը սորվին:

Այս պահուս թուրքիա կրնայ դիմադրել հարկը հաղար հոգինոց բանակի մը, եթէ հայկական սահմանադիրներ արշաւանք մը պատահի Ռուսիոյ կողմէ:

Պրուսիա նահանգին մուսթաֆա զիններն ալ զէնքի կանչուած են ու զինավարժութեան մէջ ըստ բաւականի յառաջանալուն պէս եւրոպական թուրքիա պիտի զըլկուին:

1,300,000 Մաւղերեան հրացանի նոր ապուրանք մը եղած է, որուն 300,000ը արդէն ճամբայ հանուած է դէպ ի Պոլիս:

Պոմանեան բանակը այժմ ունի 720,000 զինուոր. ընդհանուր զօրահանութիւնը պիտի արտադրէ 1,500,000 զինուոր:

Հրաման զրկուեցաւ անմիջապէս 20 նոր հեծելազուգներ կազմել ի Մակեդոնիա:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 28 մայիս

Որբերուն խնդիրը, ազգին աւանդներն կարեւոր խնդիրը դեռ չը գտաւ իր լուծումը հակառակ Ս. Օրմանեանի ջանքերուն. ժողովներու, վեճերու և ծրագրերներու վերջը չեկաւ. արձանագրութեան տեսարաններ լեցուեցան ու իրարու վրայ կը դիպուին. այս է ահա Պատրիարքարանի գործունէութեան բոլոր արդիւնքը: Պատճառը սակայն միայն մեր շատախօսութիւնը չէ, այլ նաեւ դրամը զոր մեր ունեւոր դուստարգին

գրական հանելը շատ դժուարին գործ է :

Հայը ընդհանրապէս որքան հաւատարմայ աշխարհի վրայ կը դառնայ՝ ազգային, բարեգործական նպատակներու համար : Հարուստ, ներու գասակարգ մը ունինք որ ինքն ինքն առիթ իրից և սիրտ ունենար, որքան խնդրին լուծումը շատ պիտի գիւրմար, ուրովհետեւ Պատրիարքարանին դաւաններէն բերելիք և այլ և այլ հաստատութեանց մէջ տեղաւորելիք որքան թիւը հինգ վեց հարիւր է, այսինքն, բոլոր խնդիրը տարին քանի մը հազար սակի հայթայթելուն վրան է, դու մարմը զոր թուրքիոյ ամենայն հայոց Պատրիարքը իր ուղղակի և անուղղակի գիւրմարով առ ամենայն հայ ժողովուրդը չկրցաւ մշտնջ ընել : անտեսական ասպնայը ընտիր պատրուակ մըն է գրամ չվճարելու անոնց համար որքան միայն իրենց անձին գահացում տալու համար ծներ են : Երբ մարդ կը տեսնէ որքան խնդրին չուրջը դարձած աղմուկը և միւս կողմէ երբ կը մտածէ յետոյ հայ հարուստներ միւս նալով կրնային ամենայն գիւրմար թեմաք տալ պահանջուած գումարը, ամենատարբեր խոհեր կու գտն պատել անոր միտքը մեր ազգային նկարագրին մասին : Խոսքս միայն Պոսեցի հարուստներու համար չէ, գաւառական այն բաղադրներու մէջ ալ, ուր ջարդ տեղի չուննցաւ, կը գտնուին ընտանիքներ որոնք իրենց ճոխ սեղանին փշուրներէն և իրենց ուրիշ աման տեսակ վայելքներու յատկացուցած գումարն մաս մը որքանուն նուիրելու ամենատարբական պարտականութեան զգացումը չունին : Զգացողը գրամ չունի, գրամ ունեցողը չի զգար : Բայց դարձեալ քիչ շատ, հիգաւ կան, տասնական տուողը, որքան լուծ օգնելու որոմագրութիւն ցուցնողը ընդհանրապէս էսնաֆն ու աւելի վար գասակարգն է, որովհետեւ զրկեալը կը հասնայ զրկեալին վիճակէն :

Պատրիարքը շատ ջանքերէ ետք հաղիւ կարողացաւ մեծ աղաներու հետ համաձայնել որ թիւ հարէթ խանի եկամուտէն ամառ կան յիսուն օամ : օսկի յատկանայ հիւանդանոցին, որպէս զի կարելի ըլլայ անոր խնամքներուն յանձնել հարիւր որք մանուկներ :

Մեծ բաղադրութիւն մը համարելու ենք որ օտարազգի մարդասէրներու գլխավորութեամբ արագ հասաւ պատասխանելու Հայաստանի մերկ ու անօթի մանկութիւնը : Պատրիարքարանէն առած տնայեկութեանց համաձայն գիւրմարացի, ամերիկացի և այլ միսիօնարաց ձեռքով զանազան քաղաքներու և գիւղերու մէջ կը խնամուին մօտ 2500 որբեր : և այս թիւը հաւանականաբար երթալով

պիտի մեծնայ : և մտածեցինք որ մանք 7-8 ամիսներէ ի վեր չկըրցինք 2-300 տղայ բերել տալ :

Սակայն օտարներու հովանաւորութեան ասի գտնուող սրբերուն մասին ալ ծագած է շատ կարեւոր խնդիր մը : անոնց ասանալիք կրթութեան տեսակին խնդիրը, որ լրագրաց և պաշտօնական շրջանակներու մէջ կը յուզուի հիմա : Ս. Օրմանեան կը ջանայ ամեն կերպով որ հայերէն լեզուն, և ազգային պատմութիւն և հայ եկեղեցւոյ վարդապետութիւնները ինամօք ուսուցանին հայ որբերուն : Ինք անձամբ կը բանակցի այս մասին մէկ քանի անգամ հետ, որոնք միսիօնարական մարմնայն կը վերաբերին : Միայն կրօնագիտական դասերու աւանդման մասին է դժուարութիւնը, որովհետեւ միսիօնարները բնաւ տրամադիր չեն Հայաստանեայց եկեղեցւոյ ամեն հաւատարմները և արտադրութիւնները սորվեցնել տըղաներուն, մինչդեռ Պատրիարքը կուզէ ոչ անոնց կրօնական դասերը յանձնուին բոլորովին հայ եկեղեցականներուն : Թերեւս միջին ճամբայ մը գտնուի : ամեն պարագայի մէջ Պատրիարքը կը յուսայ համաձայնութիւն մը գոյացնել, սակայն լրագրաց հրատարակութիւնները կը դժուարացնեն այս համաձայնութիւնը՝ կիրքերը գրգռելով կանխահա քընդադառութիւններով, որոնք յաճախ կ'ու խօսքեր կը պարունակեն միսիօնարներուն ուղղութեամբ : զրոյներ կան որոնք ազգասիրութիւն կը սպալն անպայման հաւատածը մեր սրբերուն օտարազգի խնամակալները և անոնց վերագրել միմիայն մարդոգրական գիտումներ : այս տեսակ չափազանցութիւնները օգուտ մը չտուէ զատ՝ կրնան շատ վնասակար ըլլալ : Ըսել չիմ ուզեր թէ քննադատելու չենք, այլ մեր քննադատութիւնները այնքան հիմնական, բանաւոր ըլլալու են որ այս մեր ազգային ու եկեղեցական պարտաւանդանութեան մասին յարգանքներն չեն միսիօնարներուն և ոչ արհամարհանք մեր խորհելու և գատելու խոսկ կերպին մասին :

Պէտք չէ որ երբեք մոռնանք թէ անհրաժեշտ պէտք ունենք օտարներուն օգնութեան, որովհետեւ մանք բացարձակապէս անկարող ենք անոնց տեղ բռնելու ի հարկին : Խեղացի և նպատակաւոր մարմար ընթացքով և խոհեմ լեզուով ջանալու ենք համաձայնել իրենց հետ, ինչպէս կ'ընէ այժմ Ս. Պատրիարքը :

Որքան խնդրէն ետք ուրիշ աւելի ծանրակշիւ խնդիր մը կ'ընել թէ պիտի ծագի մօտ ժամանակ :

Բաղէշէն, վանէն, Տիգրաս նահրաւն գրուած մասնաւոր նամակներ, զորս կ'արդարու աւելի ունեցայ, նոր, ահաւոր

ազեա մը կը զուշակին գաւառներու համար յառաջիկայ ձմրան միջոցին : Սովը կը սպառնայ մէկ քանի հայաշատ գաւառներու, որոց կողմաւորած հայ գիւղացին չկրցաւ հոցահատիկ ցանիլ՝ սերմնացու և հողը հերկելու համար կենդանի չունենալուն պատճառաւ : Ամառը այս կամ այն կերպով կրնայ անցնիլ, կըսեն վերոյիշեալ նամակները, իսկ ձմեռը սոսկալի պիտի ըլլայ : Այժմէն հարկ է մըտածել այդ ապագայ սովեաներուն համար, սակայն դրամական արդի անձկութեան, ազգ. սընտրակներու պարագայութեան, Պատրիարքարանի անճարակ, բայց բազմաղբաղ գործունէութեան այս ժամանակին մէջ ո՞վ պիտի մտածէ և ինչպէս պիտի գործէ : Որքան ծանրակշիւ, այնքան դժուարայտ խնդիրներ :

Տնտեսական տագնապն ալ և թէ ասանկ երթալ, մնալուն հանգամանք մը պիտի տեսնէ թուրքիոյ մէջ : Շատ բնական է այս, որովհետեւ այսօրէն վաղուան համար վատհասութիւնը բացարձակապէս կը պակսի : Այնպէս հաւանութիւնը առատ ճարակ կը գտնէ այն զրոյցներուն մէջ որոնք յաճախ շրջաբերութեան ենելով, հայ յեղափոխականներու, կամ յայներու, կամ իսլամ խուժանին կողմէ ցոյցի մը կամ ջարդի մը պատրաստութիւնը կը գտնեն : մտքերու այս յարատեւ վրդովման մէջ, ո՞ր վաճառականը, ո՞ր խանութպանը կը համարձակի վերսկսիլ իր գործունէութիւնը առաջուան համեմատութեամբ ուրուն համար հարկաւոր սպառումն ալ չկայ արդէն :

ԿԻՐԻՏԻՆ ՕՐԹՆՕՄԻՍԻ

Տէվլէթլէրին Կիրիտոսէ մէվլէթը իճարայ գոյաճաղարը գտնուելու հաստատեալ թիւերէն չէրաթի միւստէրիճ օլարը թալլղըն մուկապի Սթիւստան պիւտիւրի տիր :

Կիրիտ Սուլթանըն հիւրըմուտը լըղը ալթընտա պիւր պէյլիք օլուճագ տըր :

Բաբելու. — 1. Տէվլէթլէր թաւաֆընտան թապուտի էճնէպիյէ տէն պիւր իրիսթիյան բըշնա ինթիխապ օլունտագ վէ Պապը Սլիանը թաւտիգ իտէճէք տիր : 2. Մէճիսի մէպուստըն թաւթըղ զաւտարա ալտըղը գտնուելարը բըրէշնա բէտա իտէպիլէճէք : 3. Իհսան ու աֆիլ իթմէք հուզուգընա հայիզ օլաճագ տըր : 4. Մուգլթէզիյաթը մահէլլիյէ վէ շախի իթիտարարա կէօրէ իրիսթիյան վէ իսլամ մէմուրարը քէտուի ինթիխապ իտէճէք տիր : 5. Այս նըն գուվլէյի ինզըպալէիյէսի բըշնաին հուզուգըն հիւրըմուտիսի ալթընտա օլաճագ տըր :

Մէպիսի Մէպուսան. — 1. Ատաւա իսլամ վէ իրիսթիյան էհայլինին բէսըթիլինէ կէօրէ, իսլամ վէ իրիսթիյան մէպուսարալը ալըր ինթիխապ օլընտագլար : 2. Իքի սէնէտէ պիւր տէֆա վէ իթիլիւ օլարըղը վաղըթ մէճիլի թէճէմիլի իտէճէք : 3. Մէճիլի պիւտագէ վէ գտնուելարը էքսէրիյէթի ալա իլէ թէրթիպ ու թաւտիգ իտէճէք տիր :

Մալիյէ. — 1. Բուսուլաթ, էմլար վէ սալիբ վէրկիլէր վէ բօսթա վէ թէլէկրաֆ հոսըլաթը՝ էճնէպի տէվլէթլէր և գունբանալարա մէնսուպ օլունլարտան մաւտա, աւտանըն մալիյէ սանտըղընա թալիսիս օլընտագլար տըր : 2. Թէշքիլաթտան պէշ սէնէ սօնրա սէնէվի 10,000 լիւրա թիւը հիւրըմէթիլին վէրկի վէրիլէճէք տիր :

Գաւլիլի ինզըպալիյէ. — 1. Թիւրք ապքըլէրի աւտաւան չըգաճագլար տըր : Ժանտարմա վէ բօլիլէր պիւր վէ եա զիյաւտէ էվրօլարը զապիլթլէրին գօմանտուլարը ալթընտա օլաճագլար տըր : 2. Ետանըն թէսքին ու թէշքիլաթը էճնէպի տաքըլէրին տէխալէթի իլէ օլաճագ : 3. Թէշքիլաթտան սօնրա էճնէպի տաքըլէր կիտէճէք վէ ծնարըն եէրինէ միլիցիա թէշքիլ օլունտագ տըր :

Լիւսան. — Բուլ լիւսանը աւտաւա ումուլ էհայլինին լիւսանը օլտըղընտան, բուլաւ լիւսանը բէսիլ օլաճագ : գտնուելար, ֆէրմանլար վէ իրանաթը բէսիլէ թիւրքէ վէ բուլաւ իքի լիւսան իլէ թապ ու նէշը օլունտագ տըր :

Պալարագ. — Կիրիտին բէնտիսիլինէ միսիսուսալարը վէ խուսուսի պիւր պալարաղը օլաճագ տըր :

ԵՈՒՆԱՆ ՍԵՖԻՆԵԼԵՐԻ

Եանաի մուհարէպէտէ Եունան սէֆինէլէրին հիշ պիւր իլ կէօրմէթիլէրի ումուլըն թաւաճուպըն մուճիպ օլմըլ տըր :

Պրանկիլո րքէր Եա քունկ պու խուսուստան տօլարը՝ քէնտի Աթիւսա մուխալիլինին՝ Տէլիսանի պապիլէսիլինէ մէնտուպ պահրիյէ նաղըրը Մ. Լէվիտիս իլէ կէօրիլէսիլին տէրճ իթիլտիր. մէրգուլ նաղըր իւնը հարպ օլընտըղտան սօնրա իսթիֆա իթմիլ իտի :

Մ. Լէվիտիս Արման կաղթաւոր մուխալիլինէ չու եօլաւ սէօլէմիլ տիր. «Մուհարէպէտէ իլէնիլէն իսթալարտան պահս իթմէք վէ մէսուլիյէթի արամագ վաղթը տահա կէլմիլ տիր. օլ մէսէլէլէրին թէպըղը մուհարէպի իսթալմընտան սօնրա օլաճագ տըր :

Եունանիսթիլանըն տէնիզ գուվլէթիլին մուհարէպէ իթմէկէ մուգլթէտիր պէր հալէ գօյմագ իլիւն իքի սէնէ միւլթէմաթիլէն շալըլարմ վէ մուլաֆիպագ օլաւում :

Մուհարէպէտէն իլէ կիւնլէրինտէ՝ օրաույա պիւր գուվլէթիլ թէսիլի օլմագ իւզրէ տօնանմանըն ամէլիաթտա պուլընմար իլիւն լաղըմ օլան էմիլլէրի վէրաթմ : Թիւրքլէրին հաղլարը օլմաւըղը հալտէ Բըվէզաղը թապիլիլ իթմէքալ օլաղըպըրնաւ :

տալայը, մարտ 19 տա օրալարն թո-
րա թուրմամբ թէքիք իթիւմ:
մէճլիսի վիւքէլա պու թէքիքիմի
գապուլ իթմէտի վէ թիւրքէր իսթէ-
տիքէրի կիպի Բրէվէգայը գալիլէշ-
տիւրիլէր:

Սէլանիք քէօրֆէզինին ազգընտա
պուլընան Գարա Պուրնուլը վուրմագ
վէ Սէլանիք—Տէտէղաճ չըմէնտըֆէր
եօլընը պօզմագ վէ Սուսամ, Մի-
տիլի վէ Սագըզ ատալարընը գալթ
իթմէք իչիւն տաիւր Շարգ տօնանմա-
սընա էմիրէր վէրտիմ: Գարա Պուրը-
նը վուրմագ վէ մէգքիւր չըմէնտըֆէ-
րի պօզմագլէ՝ Թիւրքէր օրտուլարը-
նա իմտաա հօլլայամայաճագլար իտի
վէ պիլիմ օրտու օլ վագըթ գարչըսըն-
տա տիւրմանը եարը գուլվէթտէ պու-
լաճագ իտի: Պու իտի պէնիմ թէտպի-
պիրիմ: Հարպ սէֆինէլէրին գօման-
տանլարընա լազըմ օլան էմիրէրի
վէրտիմ քի իճրա իթսինէր: Պու է-
միրէր իճրա օլընմատը, սէպէպիլի
պիլմէմ, պանա սէօլէմէտիլէր »:

Իշթէ պու գարիպ հալլէրտէն տօլա-
յը Մ. Լէվիտիս իսթիֆասընը վէրմիշ
տիր:

ԵՌԻՆԱՆ ՎԷ ԹՈՒՐԳԻՍ

Թէսալիատա վէ Եպիլոստա
թիւրքէրին խրսթիյան էհալիյէ
գարչը իճրա իթտիքէրի խտպա-
սէթ ու մէգալիմին էօնիւ ալըն-
մաաը իչիւն լազըմ կէլէն թէտա-
պիրին իթթիլսալը պապընտա
Եուհան հիւքիւմէթի պիր նօթա
իլէ տէվէթլէրին թէվասիլիւնի
տալէթ իթմիշ տիր: Հաթտա
խարիճիյէ նազըրը Մ. Սգուլի-
տիս՝ թիւրքէրին մուհարէպէ
գայտէլէրինէ մուխալիֆ հարէ-
քէթտէ պուլընտըզարը տէվէթ-
լէրէ մալիւմ օլտըղընը Սքանուարտ
մուխպիրինէ սէօլլէմիշ վէ Եու-
նանիսթան թարաֆընտան թէէ-
տիյէ օլընաճագ թազմինաթը
հարպիյէնին մըգտարը գարար-
կիր օլաճաղը սըրատա պու մէսէ-
լէնին տաիւր նազարը տըգգաթա
ալընաճաղընա իւմիւտօլը պու-
լուտըղընը պիլտիւմիշ տիր:

Նիհայէթ Ալթինա հիւքիւմէթի
աշվալը հազըրէի միւշէվիլէշէ օն-
պէշ կիւնտէն զիյատէ տէվամ ի-
տէր իսէ թիւրքէրին զարէզ-
քեարըղընտան իլէրի կէլէճէք
վուգուլթըն մէսուլիյէթի գա-
պուլ իթմէլէճէկինի էվրոպայա
իլթար իթմիշ տիր:

* *

Էթնիքէ Էթէրիա նամ Եուհան
վաթանբէրվէրան շիրքէթի մուշ.
թազամէսի խաֆի պիր թահրի-
րաթը ումուլիյէ նէշլ իտուպ,
քէնտի ամէլիաթընը մէյտանա չը-
գարան վէ քէնտիսինէ գարչը չը-
գան ազալարը թարտ իտէճէկինի
վէ Եուհան միլլէթի տուրտուգ-
ճա շիրքէթին տաիւր պագը գա-
լաճաղընը պիլտիւմիշ տիր:

* *

Թեսալիատաքի թիւրք օրտու-
սը սէր գօմանտանը էտհէմ

րաշա տաիւր Սթանպուլ պիր րա-
բօրթ հօլլայուպ, աքբէրլէրին ու-
զուշ միւտտէթ մէշղուլիյէթսիլ
գալմալարընտան տօլայը շէտիտէն
թէէէքքի իթմէքտէ օլտըզալընը
վէ եա մուհարէպէ իթմէք վէ եա-
խօտ թէսալիատան կէրի շէքիւ-
մէք իտտաաթընտա պուլուշտուգ-
լարընը վէ օրտուտա գապիթանըն
թէէէսիլի հիւքիւմիլ գալաճագ
տէրէճէտէ աքբէրլէրին հէյէճտընը
արթմըշ օլտըղընը պիլտիւրմէքլէ,
մէրգուլմ բաշա իլալէթէն տէմիշ
տիր քի, պու սէպէպլէրտէն տօ-
լայը հուսուլա կէլէպիլէճէք վու-
գուլթա մէսուլ օլտուլայաճագ
տիր:

Թէսալիտանը Տօմքօս վէ Տէ-
վէն—Ֆուրգա մահէլլէրինտէ եա-
բըլմագտա օլան գալէ վէ թապ-
եալարըն ինչաթթընա էտհէմ բա-
շա պիլպաթ նէգալիլէթ իթմէքտէ
տիր:

Ի Ա Ս Ա Ր Ա Ր

Տէօրթ պէշ հաֆիթատան պէրու
եաղմուլարըն տէվամի սուրէթտէ
եաղմաաը սէպէպի իլէ էքինլէրին
չիւրիւլէճէկինտէն գօրգուլմագտա
իտի իսէտէ, կէլէն ճուճա էրթէսի
կիւնէ գատար Պուլկարիա տաիւր-
լինտէ հիշ պիր թարաֆտան եաղ-
մուլարըն խտտարաթընտան տօ-
լայը թէէէքքի սէտաաը իշիտիլ-
մէմիշ իտի: Ֆագաթ ճուճա էր-
թէսի աղչամը սաթթ ալաֆրանկա
7 տէն բաղար սապտհը սաթթ 8 է-
գատար, եանի 13 սաթթ միւթէ-
մատիէն վէ շիտտէթի սուրէթտէ
եաղման եաղմուլ իտայը խտտարա-
թը մուճիպ օլտուշ տիր: Է-
քինլէրին սափալարը գըրըլուպ եաթթ-
մըշ օլտըղընտան մահսուլտա
պէօյիւք նօգսանիյէթ հուսուլա
կէլէճէք տիր: Գէզա վարնա ճի-
վարընտա պուլուշան պաղարըն
պիր գըսմը սէլլէրտէն պօզուլմուշ
օլտըղը կիպի պիր չօգ էվլէրի սէլ
պտամըշ վէ պաղըլարը տա եըգմըշ
տիր:

Ճիվար գաթապալարտան վէ
քէօլլէրտէն տաիւր բէք չօգ խա-
նէլէրին խարապ օլուպ, եըգմըշ
օլտըղընտան խապէրլէրի կիւն
պէ կիւն իշիտիլմէքտէ վէ ին-
սան թէլէթիյաթը տաիւր վու-
գու պուլմուշ օլտըղը սէօլլէնիլթօր:

Հուճգարիտա վէ Բուճանիա-
տա տաիւր եաղմուլարտան բէք
պէօյիւք խտտարաթ վուգուա
կէլմիշ տիր:

* *

Եաղմուլարտան հուսուլա կէ-
լէն սէլլէր չըմէնտըֆէր վէ թէ-
լէկրաֆ խաթիւրընը պօզմուշ օլ-
տըղընտան 4-5 կիւնտէն պէրու
թէլէկրաֆ մուխապէրաթը գաթ
օլընմըշ վէ վարնա—Բուճուգ
գաթարը իշլէմէլէքտէ տիր: Պու

սէպէպաէն իշպու նուսիլէմիլտէ
եէնի հաթաթիսաթ տէրճ օլընտ-
մատը:

ԷՕՔՍԻԻՋ ՎԷ ՏՈՒԼ

Լ'Առմէնի կազէթատընըն մու-
հարըրի վէ տիրէթթօրը Մ. Մի-
նաա Չիւրաղըն լէսմի մէնպալար-
տան ալտըղը Բաբօրթլարա կէօրէ,
պաղը շէհրլէրտէ էօքսիւպ վէ
տուլ գալան միլլէթտալարընը
մըգտարը պէր վէճհի տիլ տիր:
Մուշ 2,300 էօքսիլ տուլ
Բաբրիդ 1,384 »
Ֆարրիդ 2,815 »
Արարկիր 3,333 »
Չընդուշ 696 »
Տիգրանակիրա 2,549 »
Էալու 1,740 »
Մարաշ 800 »

ՏՕՔԹՕՐ Ե ԹՕՄԱՍԵԱՆ

Սթանպուլ թապիպլէրինտէն օ-
լուպտա պիր գաշ ալտան պէրու
վարնայա հիճրէթ իթմիշ օլան
Տօքթօր Եգուարդ Թօլմասեան
շու միւտտէթի գալիլէ վարֆըն-
տա Պուլկար լիտանըն թահսիլլէ
Սօֆիատա իթթիլան վէրէքէք
իպրալը լիյագաթ ու մէհարէթ
իթմիշ օլտըղընտան, Պուլկարիա
տաիլիլնաթ թապիպլիք իթմէք
մէգուլիլէթի իլէ պիր հաֆիթա
էվիլլէ վարնայա ալտէթ իթմիշ
տիր:

Տօքթօրը՝ պու մուվաֆֆաղիյէ-
թինտէն տօլայը թէպրիք իտէրիլ:

ԻԹԱՐԸ ՄԱՍՍՈՒՍ

Ապօնէ պէտէլլէրինին էօտէնմէ-
սի հազգընտա պու կիւնէ գատար
իթմիշ օլտըղընը իլթարաթ սէ-
մէրէսիլ գալմըշ օլտըղընտան,
պու տէֆա թէքրար իլթարը քէյ-
ֆիլլէթ իթմէկէ մէգալուրիլլէթ
հասըլ օլմըշ տիր:

ՉԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

Վառնա 1 Յունիս
Եաղմուլար սէպէպի իլէ 4-5
կիւնտէն պէրու մալ ինմէտիլին-
տէն լիյացա հօգ տիր:

ՏԻԿԻՆ ԹԸՆԿԻ

Բ. Թաղ. քիւ 822 (Տիպկի Էլմէի
դիմացի փողոց)

Դիւրագոյն մէթոտով կը սորվեց-
նէ ձեւագիտութիւն և յանձն կառ-
նէ տաեղի ոշխատութիւններ չա-
փաւոր գիւնիւրով:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ, կը
պարունակէ շատ մը հին և նոր ա-
զատ երգեր, զորս այժմ ժողովորդն
ախորժանօք կ'երգէ:

Փափաքողք կրնան ստանալ զայն
փոխարէնը 1 ֆրանգի նուկալադրոշմ
(բօստի բուլ) իսրիկով խմբագրու-
թեանս, կամ գիւմելով հետեւեալ
հասցէներուն:

Տեարք

Արիս	Գուրպէթ	Ռուսնուգ
Տիգրան	Աճէմիան	Շուճուլ
Կարապետ	Թօքապալ	Սիլիսարէ
Մարտիրոս	Ֆէնտիկեան	Պուլկազ
Պաշիկ	Թօհաֆեան	Սիլվէն
Ալէքս.	Տէմիրճիպշ	Ֆիլիպէ
Իսկէնտէր	Արալանեան	Տօպրիշ
Յովհաննէս	Պիպէնեան	Պուլկըշ
Արթ.	Տէր Դեւոնդ քէնյ.	Կալաց
Թէօֆիլ	Թէրգեան	Ֆէօտտէնճէ
Ասատուր	Բրուտեան	Գահրիէ
Տիգրան	Արալանեան	Ազէքսանտրիս

Ալգ. վարժարանաց համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուզուի, 20 առ 400
գեղշ կը լինի:

Ա Ձ Դ

Գնումն եւ վաճառումն հին ու նոր
ամէն տեսակ նամակադրոշմներու (բուլ)
գիւմել Ապտիւլահման մզկիթի դէմ
ծխափաճառ Ա. Ջարբանէլեանի խա-
նութը:

4-5

Ա Ձ Դ

Վառնա, Ռուսնուգի եւ չըջակալ
քաղաքաց մէջ առեւտրական հրա-
պարակի ծանօթ եւ առաջնակարգ վա-
ճառատանց մէջ պաշտօն վարած երի-
տասարը մը՝ որ այս երկրի մէջ պէտք
եղած լիզուական հմտութիւնը ունի,
կը փափագի պաշտօն ստանձնել վաճա-
ռատան մը մէջ չափաւոր վարձատրու-
թեամբ:

Դիմել Իրաւունքի խմբագրութեան:

Ա Ձ Դ

Իրաւունքը կը վաճառուի նաեւ Օթէլ
Քօմէրսիալին ներքեւ, Տ. Սանտալանի
ծխախոտի վաճառատան մէջ, ինչպէս
նաեւ Մուսալլաի հրապարակին վրայ:
Տ. Մկրտիչի սրճարանին կից, հայ
ծխափաճառ—սրճալաճառի խանութին
մէջ, նաեւ Մուսալլա Ապտիւլահման
մզկիթի դէմ Պ. Աւետիս Ջարբանէ-
լեան ծխափաճառ—թղթալաճառի խա-
նութը:

Փափաքողք կրնան ամեն ատեն թերթ
գտնել այս երեք տեղերը:

Ա Ձ Դ

“ԻՐԱՆՈՒՆԻՔ”-ի վարչութիւնը
յանձն կառնու պատրաստել Հա-
յերէն, Պուլկարիէն, Ֆրանսիէն
և Գունարէն լիզուներով ընկա-
լարներ, հասցէներ, նամակադրու-
նիւր, մահազգեր, յայտարարու-
թիւններ, հարսանեաց և այլ հրա-
պարակներ, այցաքարտեր ևն, ևն:

Գնելը չափաւոր

Փափաքողք պարտին գիւմել խա-
բագրութեանս հասցէին: